

անուամբ աղնուական եւ հարուստ Հայ մը, որուն ընտանիքն յետոյ Լեմպէրկ գաղթեց ուր եւ իւր սերունդը կայ ցայսօր, Սուչավայի արեւմտեան կողմը՝ շինեց ⁸² Ս. Աւքսէնտ հայկական եկեղեցին, որ այժմ Zamka կը կոչուի ⁸³, ուր եւ յետոյ թաղուեցաւ ⁸⁴:

Այս եկեղեցւոյ մէջ տարին երկու անգամ պատարագ կը մատուցուի ի պարտուց, այն է Ս. Գէորգայ տօնին եւ ամառն՝ Ս. Աւքսէնտին:

Այս եկեղեցին մինչեւ ցայսօր բարձրաբերձ, ստուար եւ թնդանօթ արձակելու ծակե-

* Ակոբշինի տապանարարին աբձանագրութիւնն այլեւայլ ձեւով կ'աւանդուի այլեւայլ հեղինակներէ: Պարոնշ (Նշոտչ, էջ 5,) եւ Բժշկեան, մ'նպրճողութիւն. էջ 132 կը զննեն: «Աստ հանգչի Յակոբշայ շինող տաճարիս, Թ. 1551:», Յօդուածոյս հեղինակն կը զննէ այլազգ, տ. վարն ծան. 84: Իսկ ի գրուածս Հ. Պօղոս Վ.ի Յովսէանեան, որ 1829ին ի Սուչավա էր, կը գտնենք այսպէս.

«Այս է տապան Ակոբշին
Որ է որդի Ամիրային
Սա է շինող սուրբ տաճարին
Հանգեաւ Հայոց Ռ թուին
Կ՛Ա էր աւելին, Օգոստոսի ԺԾ.,»

Ուստի 1612ին վախճանած է Ակոբշայ: Այս արձանագրութիւնն ըստ զձագրութեան նոյն վարդապետին՝ տապանարարին ըռլորտիքը քանդակուած է: Այս գրուածոց մէջ կան նաեւ հետեւեալ արձանագրութիւնք.
«Սա է տապան հանգստեան Սարգիսին, որ է որդի Շահրմին: Հանգեաւ սայ թվ. ՌԺին (= 1561), Մայիսի գ. օրն գ. շաբթի: Ով Աղամայ որդիք թափեցէք զգինին ի ձեզմէ. զմարմինդ կու պարարես զնորոյդ քաժին պատրաստի:», Դարձեալ «Սա է տապան... (աւրնթեռնի) զի Տէր Խաչատուրին: Հանկեաւ Թ. ՌՅԴ = (1625) Յունիսի ԺԾ:», Ժ. Թ.